

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՈՐՈՏ» ՍՊԸ-ն ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/53 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	«ՈՐՈՏ» ՍՊԸ	<p>Աղբամանը պետք է պատրաստված լինի մետաղական հիմնակմախքով: Աղբամանի ընդհանուր բարձրությունը հատակից 650 մմ: Վերևի ձագարածև վերին մասի տրամագիծը <math>\Phi 450</math> մմ, իսկ ձագարածև հատվածի ներքի մասի տրամագիծը <math>\Phi 320</math> մմ, ձագարածև հատվածի բարձրությունը 150 մմ: Աղբամանի ներքևի հատվածի տրամագիծը 320 մմ, բարձրությունը մինչև ձագարածև հատվածը 500 մմ: Վերևի ձագարածև հատվածի վերին մասը պատրաստված է <math>\Phi 16</math> մմ մետաղական խողովակից գլանված <math>\Phi 450</math> մմ տրամագծով, գլանված հատվածի ծայրերի միացումը եռակցման միջոցով է, մեկ եռակցման մասով և լավորակ մշակված: Աղբամանի պատերի 40x3 մմ մետաղական ժապավենը, առանց կտրվածքի /ամբողջական/ եռակցվում է <math>\Phi 16</math> մմ տրամագծով գլանված հատվածին և <math>\Phi 450</math> մմ տրամագծով ձագարածև հատվածի վերին հատվածին, պետք է միացման կետերն ու եռակցված հատվածները լինեն լավորակ մշակված, <math>\Phi 320</math> մմ տրամագծով մասում ժապավենի հեռավորությունը մեկը մյուսից 17-18 մմ: Աղբամանի ստորին հատվածը, որտեղ զողված է 40x3մմ մետաղական ժապավեն պետք է փաթաթված լինի 50x3մմ մետաղական ժապավենով: Աղբամանի կափարիչը պետք է ամրացված լինի աղբամանին մետաղական շղթայով, իսկ աղբամանի կափարիչի անցքը՝ <math>\Phi 150</math> մմ: Աղբամանի կափարիչը պետք է պատրաստված լինի 1.8-2մմ մետաղական թիթեղից և</p>

հաստությունը ապահովելու համար աղբամանի կափարիչի արտաքին մասով պետք է փաթաթվի 20x3մմ կամ 25x3մմ մետաղական ժապավենով, իսկ կափարիչի անցքի  $\Phi 150$  մմ տրամագծով պետք է փաթաթվի 10x10 մմ մետաղական խողովակ՝ եռակցման միջոցով:

Աղբամանի մեջ տեղադրված է ցինկապատ մետաղական թիթեղից պատրաստված դույլ, որը պետք է պատրաստվի 0.4-0.5 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղով, պատերին լինեն անցքեր  $\Phi 10$  մմ, ունենա բռնակ, վերևի հատվածը՝ բռնակի ամրացման մասը ուժեղացված: Աղբամանը ներկել գրունտով, այնուհետև վերջնական լավորակ ներկով: Աղբամանը ամբողջությամբ մետաղական է, բոլոր մետաղական դետալները ամրացված են եռակցման միջոցով և բոլոր եռակցված մասերը պետք է լինեն հղկված: Աղբամանը ունի 3 անցք գետնին ամրացնելու համար: Աղբամանները պետք է ունենան առնվազն 1 տարվա երաշխիքային սպասարկում:

Աղբամանները մատակարարվում են փաթեթավորված պոլիէթիլային թաղանթով:

Աղբամանները պետք է լինեն չօգտագործված և պատրաստված լինեն նոր՝ չօգտագործված նյութերից: Աղբամանի հետ պետք է տրամադրվի մեկ հատ պահեստային դույլ: Օգտագործած բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին: Աղբամանների տեղափոխումը և տեղադրումը պետք է իրականացվի մասնակցի միջոցների հաշվին՝ ըստ Պատվիրատուի կողմից նախանշված վայրերի: Մինչ ապրանքի արդյական մատակարարումը Մատակարարը պետք է Պատվիրատուին ներկայացնի պատրաստի նմուշ՝ ապահովելով սույն տեխնիկական բնութագրի պահանջները:





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

«НСНС» УПС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЦСУՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/53 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		